

է աղքատութիւն, խեղճութիւն, ուսումնասիրութեան միջոցներու պակասութիւն: Այս սակայն մեր պարտքն է յորդորել զամէնքը այնչափ ընթերցասէր ըլլալու, որ անով ինչուան ասարգելքներն ալ վերցուին կամ պակասին. իսկ թէ իրացընէ ընթերցասիրութիւնն ու ուսումնասիրութիւն մարդուս աղքատութիւնը և խեղճութիւնը կը պակասեցընեն, ամէն օրուան փորձերով ալ յայտնի է, և աղէկը ան է որ մեր ազգը իր վրայ ալ հիմա աւելի պայծառ կը տեսնէ աս ճմարտութիւնը, և կարօտ չէ երկայն յորդորանքներու: Ատեն մը կար որ գրել կարդալը միայն եկեղեցականներու պահուած արհեստ մը կը կարծուէր. բայց հիմա աս կարծիքը գրեթէ վերցուած է. վասն զի ամէն մարդ գիտէ որ գիտութիւնը որ և իցէ մարդու արդար ժառանգութիւնն է, և ամէն մարդ պարտական է կրցածին չափ իր բանակասութիւնը ուսմամբ և գիտութեամբ կրթելու և օրէ օր՝ կատարելագործելու:



Բարոյական առաքանք:

ՅԱՏԱԿԸ չտեսած փոսիդ մէջ մի կոխեր, վասն զի խորութիւնը չես գիտեր. չճանցած մարդուդ հետ համարձակ մի վարուիր, վասն զի սրտին խորութիւնը չես գիտեր:

Ա՛ր և իցէ կենդանի կրնայ ճանչցուիլ մորթովը, ձեռովը, ու ցեղովը. միայն մարդուն աղէկութիւնը կամ գէշութիւնը իր առաքինութենէն ու մոլութենէն կը հասկըցուի. ոչ մազերէն, ոչ հագուստէն և ոչ նախնիքներէն:

Խոհեմ ան մարդը կը սուրի, որ ամէն գործողութեան մէջ սկիզբն ու

վերջը՝ աջն ու ձախը առաջուց կը մտածէ. այսպիսին ինքիւր վրայ ոչ աղէկ կը խօսի ոչ գէշ, վասն զի գիտէ որ ինքզինքը գովելը փառամոլութի է, և ատենէ դուրս վար զարնելը անմտութիւն. խօսողին համար մեծ պակասութիւն, մտիկ ընողին ալ մեծ տանջանք:

Ա՛րդ կայ որ իրեն մանր պակասութիւնները ամէնուն առջևը կը զուրցէ, որպէս զի հասկըցընէ թէ մեծ պակասութիւն չունի. ինքզինքը վար կը զարնէ՝ որպէս զի գովեստ լըսէ. սուտ խոնարհութեամբ իր փառասիրութիւնը կը լայտնէ, և անով ուրիշներուն վրայ տիրել կը ջանայ:

Խոհեմ մարդը ամէն բան վար զարներ, չէ նէ՝ շատ չարասիրտ կը լար. ամէն բանի ալ մէկէն չհաւնիր, չէ նէ շատ տղայամիտ ու ցած կը լար:

Շատ մարդ կայ որ ուրիշներու աւելի աղէկ գիտէ խորհուրդ տալ քան թէ իր անձին:

Ինկերութե մէջ գտնուողին գործքերը ամէնուն աչքին առջևն են. իսկ ան գործքերուն դատաւոր շատ անգամ տգէտները և նախանձոտներն են. աս երկու տեսակ մարդիկն ալ ոչ արհամարհելու է, և ոչ խիստ մեծ բանի տեղ դնելու:

Այ կամ չէ մակբայը՝ լողին շատ անգամ ծանր է, անոր համար ըսողին ալ ծանր պիտի ըլլայ. բայց երբեմն ոչ առայն աղէկ է: Բեզմէ բան մը խնդրողին մէկէն՝ ի մէկ չէ մըսեր. ատ լեղի դեղը անուշութեամբ ու քաղաքավարութեամբ բարեխառնէ. շատ անգամ ասով խնդիրքը կատարածի չափ կը լաս:

Ճմարտասէր ու բարեսէր մարդուն ականջը երկու դուռ ունի. առջի դռնէն ընդունած լուրը կամ խօսքը երկրորդէն ներս չառնէր՝ ինչուան աղէկ մը չքննէ: